



Գեղարքունիքի մարզում կաղամբի
մշակումը, շահութաբերության
տվյալները և իրացումը



Կաղամբը պատկանում է կաղամբագգիների ընտանիքին: Արմատային համակարգը առանցքային է: Ցողունը լինում է կանգուն և ճյուղավորված: Ծաղկաբույլը ունի ողկույզի տեսք, կարող է լինել նաև վահանաձև, ծաղիկները՝ մանր են: Ծաղկման շրջանը ամռանն է: Սերմերի գույնը դեղին է, մուգ դարչնավուն, կամ մուգ գորշավուն, դրանք լինում են գնդաձև:

Կաղամբը տարածում ունի Գեղարքունիքի, Արագածոտնի, լոռու և այլ մարզերի ստորին լեռնային գոտուց մինչև վերին լեռնային գոտին: Աճում է չոր լեռնային տարածքներում և հատկություն ունի աղբոտելու միամյա խոտաբույսերի ցանքատարածությունները:

Հայաստանի Հանրապետության տարածքում կաղամբի հանդիպող տեսակներն են՝

- Կաղամբ յուղաբեր
- Կաղամբուկ երկարացած
- Կարնճրակ



Գեղարքունիքի մարզում կաղամբ մշակում են մեծ մասամբ՝ Զոլաքարի և Վարդենիկի բնակիչները: Մեծ մասամբ այգեգործները մշակման աշխատանքները կատարում են ձեռքով: 1 հա տարածքի ջրման համար հարկավոր է 18 000 դրամ: Զոլաքար համայնքում ընդհանուրը կազմում է 96 000 դրամ, որովհետև խորքային հորը վարելահողերից հեռու է գտնվում: Համայնքներում կաղամբի բերքատվությունը 1հա-ից 70-100տ է: 1հա հողատարածությունում կարելի է տնկել 30 000 սածիլ:

Քանի որ վարելահողերում, որտեղ ցանվում է կաղամբ միջին չափը կազմում է 0,5 հա, այդ իսկ պատճառով հաշվարկները կատարված են 0,5 հա հողատարածքի համար:



Ըստ համայնքների ցուցանիշի՝ կադամբի շահութաբերության տվյալները.

Անվանում	Դրամաքանակ	Քանակ
Վար	15 000	1
Թունաքիմիկատ	40 000	2-3 անգամ
Զուր	90 000	9 000 x 10 ջուր
Սաճիլ	150 000	15 000 x 10 դրամ
Մշակման աշխատանքներ	400 000	4 աշխատակից- ցանք ու բերքահավաք
Ընդհանուր ծախս	695 000	
Վաճառք	2 800 000	70 դրամ x 40 000կգ
Օգուտ	2 105 000	2 800 000-695 000

Զուլաքար համայնքի համար կատարվում է առանձին հաշվարկ, քանի որ այնտեղ ջրի վճարը բարձր է:



Զուլաքարում կաղամբի եկամտաբերության հաշվառումը.

Անվանում	Դրամաքանակ	Քանակ
Վար	15 000	1
Թունաքիմիկատ	40 000	2-3 անգամ
Զուր	480 000	48 000 x 10 ջուր
Սաճիլ	150 000	150 000 x 10 դրամ
Մշակման աշխատանքներ	400 000	4 աշխատակից- ցանք և բերքահավաք
Ընդհանուր ծախս	1 085 000	
Վաճառք	2 800 000	70 դրամ 40 000 կգ
Օգուտ	1 715 000	2 800 000-1085 000



Հաշվառում ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրության ծառայության միջին ցուցանիշի

Անվանում	Դրամաքանակ	Քանակ
Վար	15 000	1
Թունաքիմիկատ	40 000	2-3 անգամ
Ջուր	90 000	9 000 x 10 ջուր
Սաճիլ	150 000	150 000 x 10 դրամ
Մշակման աշխատանքներ	400 000	4 աշխատակից-ցանք և բերքահավաք
Ընդհանուր ծախս	695 000	
Վաճառք	1 750 000	70 դրամ x 25 000 կգ
Օգուտ	1 055 000	1 750 000- 695 000

Ինչպես երևում է աղյուսակներից, կաղամբի մշակումը համայնքներում շահավետ է:

Մարդիկ սեզոնին կաղամբները պահում են նկուղներում, սակայն այդ դեպքում բերքը հաճախ նեխում է: Որպեսզի կաղամբը պահպանվի սեզոնին և վաճառվի մատչելի գնով, այդ պատճառով մարդկանց համար կարևոր դեր ունեն սառնարանների կառուցումը:

Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքում տարածված չէ կաղամբի աճեցումը:



Կաղամբ աճեցնում են 10 հա հողատարածքում: Համեմատելով այլ մշակաբույսերի հետ՝ կաղամբի արտադրականությունը բարձր չէ: Մեկ մարդու հաշվարկով կազմում է 12233 դրամ, որին գերազանցում են արտադրականությունը՝ սխտորի, կարտոֆիլի, կտավատի և հաճարի աճեցման ոլորտներում:

Վերին Գետաշեն համայնքում 1 հեկտար տարածքի բերքը կազմում է 39,7տ, մինչդեռ Արագածոտնի մարզում 51,54տ:

Գեղարքունիքի մարզում 2011թ-ին կաղամբի իրացումը խնդիր էր դարձել, իսկ 2012թ-ին արդեն կաղամբը լավ էր իրացվում: Եթե 2011թ-ին կաղամբի 1կգ-ի գինը 60-80 դրամ էր և դժվար էր իրացվում, ապա 2012թ-ին այն հասնում էր 120 դրամի, իսկ շուկայում 150 դրամի և իրացվում էր :

Մարզի որոշ համայնքներում կաղամբի իրացման թափը ստուգելուց հետո պարզ դարձավ, որ կաղամբ 2012թ-ին ավելի լավ է իրացվել քան անցած տարիներին, գինը նույնպես մնացել էր կայուն: Սակայն 2012թ-ի սկզբին՝ փետրվարին կաղամբը դեռ դժվար էր իրացվում:


Թեև Մարտունու՝ Վարդենիկ, Զուլաքար, Վաղարշեն և Աստղաձոր գյուղերում միշտ արտադրվել է որակյալ բերք, սակայն նկատվել է 30 հազար տոննա կաղամբի ավելցուկ: Քանի որ գարնանը կաղամբը դժվար կլիներ պահպանել, այդ իսկ պատճառով կաղամբի 1կգ-ի գինը դարձավ 50-70 դրամ:




Գեղարքունիքի մարզում սխտորի
մշակումը, ցանքը, խնամքի
աշխատանքները, բերքահավաքը,
պահպանումը և շուկայական գները



Սխտորը ունի վեգետատիվ բազմացում, միամյա բույս է: Նրա պարունակության մեջ կան՝



Սխտորը պարունակում է նաև մի շարք կարևոր տարրեր, որոնցից են՝



✚ Սխտորը դիմացկուն է ցրտի նկատմամբ

3-5°C-ում սկսում են պճեղներից արմատները ծլել, իսկ արդեն 10 °C-ում սկսում են շատ ավելի արագ աճել, արմատների աճը կանգ է առնում 20 °C-ում:

✚ Որպես տնկանյութ պետք է ծառայի տեղական սխտորը, որպեսզի վերջում ստացվի որակյալ և բարձր բերք, իսկ վաղ գարնանը ցանելու նպատակով հարկավոր է տնկանյութը պահել ցուրտ պայմաններում:

✚ Չնայած նրան որ սխտորը լույսի նկատմամբ պահանջկոտ չէ, սակայն լուսավոր պայմաններում այն ավելի շուտ է հասնում: Ցերեկվա ժամերին 10 ժամից պակաս սխտորի մեջ չեն կուտակվում սննդանյութեր և հետևաբար սոխուկում պճեղներ չեն ձևավորվում:



✚ Բույսի սկզբնական զարգացման համար հարկավոր է բարձր խոնավություն: Աճման երկրորդ կեսին պետք է միջին խոնավություն, իսկ հասունացման փուլում հարկավոր չէ այլևս ջրել:

Սխտորը լավ է աճում բերրի, օրգանական նյութերով հարուստ և մոլախոտերից ազատ հողերում:

✚ Չի կարելի սխտոր աճեցնել ծանր կավավազային հողերում:



Հողի նախապատրաստումը ցանքի

- Ընդհանրապես հողի մշակման աշխատանքները սկսում են աշնանից:
- Սխտորից առաջ եղած մշակաբույսերից հետո պետք է կատարել խոզանի երեսվար և 25սմ խորությամբ վար, որը իրականացվում է 3-4 շաբաթ հետո:
- Այն մշակաբույսը, որին հաջորդում է սխտորը հարկավոր է տալ 60-80տ/հա օրգանական պարարտանյութ:
- Այն հողերում, որտեղ բացակայում են օրգանական պարարտանյութերը սխտորին պետք է տալ 30-40տ/հա փտեցված գոմաղբ:



Ցանքի ժամկետը

Նախալեռնային	→ Գարնանացան	→ 25.04-10.05
	→ ձմեռամուտ	→ 15.10-25.10
Լեռնային	→ ձմեռամուտ	→ 1.10-15.10
Հարթավայր	→ Գարնանացան	→ 25.03-10.04
	→ ձմեռամուտ	→ 25.10-1.11

Մխտորի ցանք	
Նորման	Ժամկետը
1 հեկտար տարածությունում աճեցվում է 280-350 հազար սխտոր, որի համար պահանջվում է 6,5-8g պճեղ: Պճեղների չափսից է կախված ցանքի նորման:	Մխտորը պետք է ձմռան սկզբնական շրջանին այնպես տնկել, որ պճեղները արմատավորվեն, սակայն չծլեն, տևական ցուրտը սկսվելուց 2-3 շաբաթ առաջ, այսինքն երբ ջերմաստիճանը կլինի 5-8 °C: Մխտորի տնկման ժամանակաշրջանը կախված է եղանակից:

Մխտորի խնամք

- Մխտորը և սոխը խնամում են նույն կերպ:
- Ձմռան սկզբնական շրջանում ցանած սխտորը կարիք չկա ջրել, որովհետև այն ջուր ստանում է գարնան և աշնան անձրևներից, միայն հուլիսի սկզբին, երբ սկսում են զարգանալ տերևները կախված եղանակից պետք է ջրել 5-10 օրը մեկ:
- Հաճախակի ջրումների դեպքում բույսի չափսերը կմեծանան, սակայն կդադարի պահունակ լինել:
- Վեգետացիայի ժամանակ բույսը հարկավոր է 2-3 անգամ հանել հողից և փխրեցնել, պետք է նաև սխտորի դաշտը զերծ պահել մոլախոտերից:
- Դրանից 2 շաբաթ առաջ հարկավոր է գլխիկները հանել հողից, հատկապես անձրևոտ եղանակներին, որը արգելակում է սոխուկի բաժանումը պճեղների:



Մխտորի նախորդներ

- Այս բույսի համար լավ նախորդ են հանդիսանում, այն բույսերը, որոնք ամռան երկրորդ կեսին ազատում են դաշտը: Օրինակ՝ վարունգ, դդմիկ, կանաչ լոբի, շուտ հասած կարտոֆիլ և կաղամբ:
- Մխտորը լավ նախորդ է գրեթե ամբողջ բանջարային մշակաբույսերի համար, միայն սոխի համար է, որ սխտորը լավ նախորդ չէ, քանի որ նրանք ունեն նույն հիվանդությունները:

Բերքահավաք

- Երբ բույսի տերևները ստացել են պառկած տեսք և չորացել են նշանակում է, որ այն արդեն հասունացել է:
- Մխտորը պետք է հողից հանել այն ժամանակ քանի դեռ այն արմատի վրա չի հասունացել, հավաքելուց հետո սխտորի մոտ տեղի է ունենում ետքադային պրոցես, հարկավոր է չորացնել բերքը:
- Սովորաբար սխտորը հավաքում են չոր եղանակին, սոխուկները քանդելով բահով կամ բուկլիցով: Մխտորը պետք է թափ տալ հողից և դասավորել:
- Չորացնելուց հետո թողնում են 3-4սմ երկարություն ունեցող ցողունը, իսկ տերևները կտրում:



Պահպանում

- Թե ինչքան կպահվի սխտորը կախված է հասունացման և բերքահավաքի ժամկետից, չորացման և պահպանման ձևից:
- Սխտորը չի կարելի պահպանել այլ բանջարեղենների հետ միասին, ուստի այն պահպանում են առանձին, չոր տարածքներում:
- Չորացնելուց հետո բերքը դասավորում են 5-8կգ տարողությամբ արկղերի մեջ:
- Հարմար է օգտագործել այնպիսի արկղեր, որոնք ունեն ոտիկներ և դրանց հնարավոր է դարսել իրար վրա:
- Բերքը կարելի է նաև լցնել ցանցերի մեջ և կախել:



Պարենային սխտորը հարկավոր է պահպանել $-1-3^{\circ}\text{C}$ -ում:

Արդեն չոր սխտորը կարելի է պահել ավելի ցածր ջերմաստիճանում, սակայն օդի հարաբերական խոնավությունը չպետք է գերազանցի 70-80%-ը:

Երբ սկսվում են ցրտերը հարկավոր է ջերմաստիճանը իջեցնել $1-3^{\circ}\text{C}$, իսկ խոնավությունը պետք է իջեցնել մինչև 75-85%: Գարնանը խորհուրդ չի տրվում ջերմաստիճանը բարձրացնել, կանոնավորում են օդափոխությամբ, չպետք է թույլ տալ, որ արմատները աճեն:

Սխտորը իրացնում են այն ժամանակ, երբ նկատվում են աճման առաջին նշանները:

Սերմնացուն ցանում են շատ շուտ, որպեսզի արմատները պահեստում չաճեն:



Գեղարքունիքի մարզում բույսի ցանման աշխատանքները սկսում են հոկտեմբերի վերջին, ամեն տարի մեծացվում են ցանքատարածությունները, քանի որ շուկայում պահպանվում է սխտորի բարձր գին: Գեղարքունիքի մարզի որոշ համայնքներում՝ Մեծ մասրիկ, Նորակերտ և փոքր մասրիկում սխտորի ցանքատարածությունները ավելի շատ տարածքներ են զբաղում: Սխտորի ցանքն նշված համայնքներում հասնում է մի քանի տասնյակ հեկտարի:



Քանի, որ 2017թ-ին շուկայում սխտորի գինը՝ 1000-1500 դրամ էր, այդ պատճառով համարիա բոլոր տնտեսությունները սկսեցին սխտոր ցանել տնամերձ վայրերում, հիմնականում՝ ձեռքով: Տնտեսությունները գնալով ընդլայնեցին ցանքատարածությունները:

Նորակերտ համայնքում ավարտվել են սխտորի ցանքի աշխատանքները, իսկ Մեծ Մասրիկ և Փոքր մասրիկում շարունակվում են: Մեծ Մասրիկում անգամ մարդիկ պատրաստել են մեծ հողատարածությունների համար նախատեսված ձեռքի տեխնիկա, որով իրականացնում են սխտորի ցանք: 2017թ-ի հոկտեմբերի 27-ի տվյալներով Մեծ Մասրիկում ցանվել է մոտ 13 հեկտար սխտոր: Ինչպես կարտոֆիլի դեպքում, սխտորի դեպքում նույնպես մշակությունը դժվար չէ և ջանքեր չի պահանջում: Կարտոֆիլը ավելի շատ բերք է տալիս, քան սխտորը, սակայն շուկայական գնի սահմաններում շատ շահավետ է: 2017թ-ին բերքի իրացման խնդիր գրեթե չի եղել:

Սխտորի շուկայական գինը հաշվի առնելով, նրա արտադրությունը մարզում կմեծանա:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):